
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԻ ԽՄԱՑՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ
ԻՆՏԵՏԱՐՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՔՍԵԼԵՐԱՏՈՐԻ ՇԵՆՔԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մշակել է՝

ԱԽՈՇ նախագծի բնապահպանական և սոցիալական հարցերով խորհրդատու՝
Ալիսա Սավադյանը

Մարտ 2022

ՄԱՍ Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ	
Երկիր	Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի անվանում	«Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի» (ԱԽՈԵ) ծրագիր «Ինժեներական քաղաքի Աքսելերատորի շենքի կառուցում»
Հողատարածքի հետ կապված գործողությունների շրջանակ	<p>(ԱԽՈԵ) ծրագիրը կֆինանսավորի Ինժեներական քաղաքի արքսելերատորի շենքի կառուցման աշխատանքները՝ ծրագրի 2.3 - քլաստերի ՊՄՀ զարգացման շրջանակում:</p> <p>«Ինժեներական քաղաքի հողի բարեկարգման և ենթակառուցվածքների կառուցում» ծրագրի բնապահպանական փորձաքննության դրական եզրակացությունը տրվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից (15.07.2021թ.)</p> <p>Ինժեներական քաղաքը նախատեսվում է տեղակայել մոտավորապես 3 հեկտար հողատարածքի վրա՝ Երևանի Բագրևանդ փողոցում: Ինժեներական բիզնես արքսելերատորը և 22 ԻՔ ռեզիդենտների շենքերը ԻՔ մասն են կազմում: ԻՔ 22 ռեզիդենտների շենքերը կառուցվելու են ինժեներական ընկերությունների սեփական միջոցներով: Ինժեներական բիզնես արքսելերատորը և Աշխատանքային համատեղ տարածքը կտրամադրեն հարմարություններ ինկուբացիայի և արքսելերացիայի համար, փոքր գրասենյակային տարածքներ ստարտափների համար, համատեղ աշխատանքային տարածք թիմերի համար, ղեկավար և տեխնիկական աշխատակազմի համար վարչական տարածքներ, հանդիպումների սենյակներ, կոնֆերանս դահլիճներ, դասասենյակներ և համատեղ օգտագործման լաբորատորիաներ: ԻՔ 22 ռեզիդենտ ինժեներական ընկերությունները կիրականացնեն իրենց արտադրանքի նախագծումն ու մշակումը՝ օգտագործելով չափման սարքավորումներ, նախատիպերի լաբորատորիաներ և մեքենայական գործիքներ:</p> <p>Գլխավոր հատակագծի համաձայն՝ Ինժեներական քաղաքի արքսելերատորը գտնվում է ԻՔ հողատարածքի հարավ-արևելյան մասում: Այն 4 հարկանի շինություն է՝ 70մ երկարություն և 28 մ լայնություն առանցքային չափերով:</p> <p>Հիմնական նպատակն էր ստեղծել գործարկվող կանաչ տանիքի տարածք, որն ունի մի շարք առավելություններ՝ հարկերի միջև հարմարավետ կապ, բարենպաստ միկրոկլիմա և տարհանման պայմաններ, բացօթյա աշխատանքային միջավայր: Շենքի արտաքին հարդարման հիմնական նյութերն են բետոնե մակերեսները, մեծ ապակեպատ մակերեսները և տեղ-տեղ փայտի ու մետաղի օգտագործումը: Ապակեպատումը նախագծված է առջևի ոչ շրջանակային կոնստրուկցիաներով (ջերմային կամուրջ), արևապաշտպան և էներգախնայող թաղանթով: Թեք, օգտագործելի կանաչ տանիքը կարող է օգտագործվել որպես ամֆիթատրոն մեծ բացօթյա հավաքույթների համար: Կազմակերպված է ներքին ջրահեռացման և դրենաժի համակարգ: Նախատեսված է մեկ վերելակ 4 հարկի համար, մուտքը նախասրահից, որը սպասարկում է նաև հաշմանդամություն ունեցող անձանց: Տարածքը պարսպապատված չէ:</p> <p>Նախատեսվում է կառուցել հետևյալ տարածքները՝ ըստ հարկերի.</p> <p>4-րդ հարկ՝ արտադրական տարածք 1384 մ², սրահ 308 մ², սանհանգույցներ, պահարաններ 45,2 մ², կաթսայատուն 7,2 մ², էլեկտրական վահանակ 11,3 մ², սերվերի սենյակ 48,5 մ², աստիճանավանդակ, վերելակ, միջանցք և այլն 163 մ², հարկի ընդհանուր մակերեսը՝ 1993.0 մ²:</p> <p>3-րդ հարկ՝ գրասենյակներ 871,6 մ², խորհրդակցությունների սենյակ 76,3 մ², սանհանգույցներ, խոհանոց, հավաքարարի սենյակ 45,8 մ², համատեղ աշխատանքային տարածք, նախասրահ, միջանցք և այլն 423 մ², դահլիճի նախասրահ 49,4 մ², սրճարան 76 մ²; հարկի ընդհանուր օգտագործման մակերեսը 1542 մ²:</p>

<p>2-րդ հարկ՝ գրասենյակներ 911 մ², խորհրդակցությունների սենյակ 76 մ², սանհանգույցներ, խոհանոց, հավաքարարի սենյակ 45,8 մ², համատեղ աշխատանքային տարածք, նախասրահ, միջանցք և այլն 400 մ²; հարկի ընդհանուր օգտագործման մակերեսը 1432 մ²:</p> <p>1-ին հարկ՝ գրասենյակներ 621 մ², խորհրդակցությունների սենյակ 86,2 մ², սանհանգույցներ, խոհանոց, հավաքարարի սենյակ 46,5 մ², համատեղ աշխատանքային տարածք, նախասրահ, միջանցք և այլն 402 մ²; հարկի ընդհանուր օգտագործման մակերեսը 1156 մ²:</p> <ul style="list-style-type: none"> ✓ Շենքի ջեռուցումն ու հովացումը իրականացվում է կենտրոնացված համակարգի միջոցով; ✓ Որպես ջեռուցման սարքեր նախատեսվում է օգտագործել հատակային «ֆանկոյլ» ագրեգատներ, որոնք սնվում են կաթսայատանը տեղադրված կոնդենսացիոն կաթսաներից: Այս օդափոխիչները նաև օգտագործվում են շենքը հովացնելու համար: ✓ 500 կՎտ հզորությամբ երկու չիլեր՝ կոնդենսատորի օդային սառեցմամբ, օդորակման և օդափոխիչի համակարգերի հովացման աղբյուրն են: ✓ Նախատեսվում են էներգախնայող լուծումներ ✓ Նախատեսվում է շենքը ապահովել էլեկտրական վահանակով, որտեղից կիրականացվի լուսավորության և հոսանքի բոլոր պանելների էլեկտրամատակարարումը: ✓ Նախագծված են լուսավորության հետևյալ տեսակները. <ol style="list-style-type: none"> 1. աշխատանքային՝ բոլոր շենքերում 2. վթարային՝ տարհանման և բոլոր հատուկ նշանակության սենյակներում՝ վերալիցքավորվող մարտկոցներով լամպերի օգտագործմամբ. 3. ահագանգային – բոլոր ելքերում <ul style="list-style-type: none"> ✓ Լուսավորման հսկողությունն ապահովվում է տեղում՝ կենտրոնացված կերպով, և ընդարձակ տարածքներում (արտադրամասեր, աստիճանավանդակներ, սրահներ): <p>Համաձայն ազգային օրենսդրության («Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014թ.) Աքսելերատորի շենքի կառուցումը ենթակա է բնապահպանական փորձաքննության (շենքի կառուցման մակերեսը ավելի քան 1500 մ²): «Ինժեներական քաղաքի Արագացուցիչ շենքի կառուցման» բնապահպանական փորձաքննությունը ընթացքի մեջ է; փետրվարի 22-ին տեղի կունենա երկրորդ հանրային խորհրդակցությունը: Վերջնական եզրակացությունը նախատեսվում է ստանալ մինչև 2022 թվականի մարտի վերջ:</p>			
Ինստիտուցիոնալ կարգավորումներ (ՀԲ)	Առաջադրանքի թիմի ղեկավարներ. Երալի Բեկսուլթան Կարեն Գրիգորյան	Պաշտպանության մասնագետներ՝ Ադրիան Միհալեսկու, բնապահպանական Սոֆիա Վ. Գեորգիևա, սոցիալական	
Իրականացման կարգավորումներ (ՀՀ)	Իրականացնող կառույց՝ Վարչապետի գրասենյակի ներքո գործող ԾԻԳ	Վերահսկիչ (կորոշվի)	Կապալառու (կորոշվի)
ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ			
Կառույցի անվանումը, որի տարածքը պետք է վերականգնվի/վերակառուցվի	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն		
Կառույցի հասցեն և գտնվելու վայրը, որի տարածքները պետք է վերակառուցվեն	Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Նոր-Նորք Բազրևանդ փողոց, հողամաս 74		

<p>Ով է օգտագործում հողատարածքը (ֆորմալ/ոչ-ֆորմալ)</p>	<p>Ինժեներական քաղաքի կառուցման հիմնար նախատեսված հողատարածքը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը: Անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթուղթն է N 05042019-01-0170 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, տրված 04/01/2019 թ-ին և տրամադրված 04/01/2019 թ-ին No. 2752 Նվիրատվության համաձայնագրի հիման վրա: Համաձայնագիրը ստորագրվել է Երևանի քաղաքապետարանի և ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության միջև: Տեղի չի ունեցել որևէ ակամա վերաբնակեցում կամ կորուստ (հողի, շենքերի, շինությունների, ակտիվների, տնտեսական և այլն): Կից ներկայացվում է համաձայնագիրը՝ հայերեն նոտարական թարգմանությամբ (Հավելված 2):</p> <p>Հողատարածքում կան քարերի և բետոնե բեկորների մեծ կույտեր, որոնք ենթակա են քանդման:</p>
<p>Հողատարածքի ֆիզիկական և բնական միջավայրի նկարագրություն</p>	<p>ԻՔ գտնվում է Երևանի Նոր-Նորք թաղամասում՝ ճանապարհին մոտ գտնվող նորակառույց բնակելի տարածքում: Հողատարածքը տանող ճանապարհներն ունեն ամֆալտապատ մայրեր: Տեղակայված լինելով զարգացած հատվածում՝ շինարարական գործունեության տարածքում վայրի բնություն չկա: Ծառերը և թփերը չեն խանգարում շինարարական աշխատանքներին: Շինհրապարակում առկա են քանդման ենթակա քարերի մեծ կույտեր և բետոնե կոնստրուկցիաների բեկորներ: Նշված թափոնները մանրեցնելուց հետո կօգտագործվեն տարածքի հարթեցնելու համար: Մանրացված և տեսակավորված մանրախիճը ժամանակավորապես կպահպանվի ջարդիչ սարքին հարող տարածքում: Տարածքը մասամբ ծածկված է վերնահողով, որը կհեռացվի և ժամանակավորապես կպահվի շինհրապարակում առանձնացված տարածքում և կօգտագործվի տարածքի կանաչապատման ընթացքում:</p> <p>Շինարարական մեքենաների և սարքավորումների մուտքն իրականացվում է Բագրևանդ, Ն. Ստեփանյան և Մոլդովական փողոցները հատող երթուղիներով:</p> <p>Ինժեներական քաղաքը կունենա մուտքի/ելքի 3 դարպաս (i) մուտք/ելք մեքենաների և սարքավորումների համար Բագրևանդ փողոցից, (ii) մուտք/ելք դեպի ավտոկանգառ և (iii) մուտք/ելք Մոլդովական/Ն.Ստեփանյան փողոցներից:</p> <p>Շինհրապարակում՝ ցանկապատված տարածքի ներսում շինարարական մեքենաների և սարքավորումների կայանման և շինանյութերի և շինարարական թափոնների ժամանակավոր պահեստ ստեղծելու համար բավականաչափ տեղ կա:</p> <p>Շինանյութերի և շինարարական և քանդման թափոնների տեղափոխումը կիրականացվի Երևանի թույլատրված ճանապարհներով, իսկ բեռնատարները պատված կլինեն պաշտպանիչ շերտով:</p> <p>Կապալառուն կապահովի հանրային ճանապարհների անվտանգ և անխափան գործունեությունը շինարարության ընթացքում և կպահպանի պետական լիազոր մարմնի պահանջները:</p> <p>ԻՔ գործունեության համար ճանապարհային և փոխադրման սխեմաները կհաստատվեն պետական մարմնի կողմից: Մոտակա բնակելի շենքը ԻՔ տարածքի ցանկապատից 22 կմ հեռավորության վրա է:</p> <p>Կոյուղու և անձրևաջրերի հեռացման 1400 մ երկարությամբ ստորգետնյա խողովակաշարը անցնում է հասարակական ճանապարհի եզրի երկայնքով՝ շինհրապարակից մինչև Մոլդովական փողոց: Խմելու ջրի ստորգետնյա 22 մ խողովակաշարը անցնում է հանրային ճանապարհի երկայնքով: 1500 մ երկարությամբ ստորգետնյա էլեկտրահաղորդման մալուխի անցկացման և դեպի ԻՔ տարածք տանող 30 մ բնական գազի հիմնական խողովակաշարի կառուցման համար կօգտագործվի հասարակական տարացք: Բոլոր խրամուղիները գծանշված կլինեն արգելապատնեշներով և փակումից անմիջապես հետո կբերվեն նախնական վիճակի: Բոլոր շինարարական մեքենաներն ու սարքավորումները կտեղակայվեն ցանկապատ տարածքի ներսում: Ծրագրի իրականացումը որևէ ժամանակավոր կամ մշտական ազդեցություն չի ունենա հարևանությամբ գտնվող բիզնեսների վրա:</p>
<p>Նյութերի /հատկապես գործիքների, ջրի, քարի/ ձեռքբերման</p>	<p>Անհրաժեշտ գործիքները և շինանյութերը կարող է ձեռքբերվել մոտակա վաճառակետերում կամ մեծածախ առևտրի կենտրոններում:</p> <p>Շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ ջուրը առկա է շինհրապարակում</p>

տեղակայումներ և հեռավորություն:	և մատակարարվում է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից: Միացման տեխնիկական պայմանների փաստաթուղթը տրամադրվել է «Ինժեներական քաղաքի հողի բարեկարգման և ենթակառուցվածքների կառուցման» շրջանակում (ԲՄԿՊ նախագիծը հաստատվել է ՀԲ կողմից 27.06.2021 թվականին):
ՕՐԵՆՄԴՈՒԹՅՈՒՆ	
Ենթածրագրային գործունեությանն առնչվող տեղական օրենսդրություն և թույլտվություններ	<p>Հետևյալ օրենսդրությունը սահմանում է նախագծի գործունեությանը առնչվող իրավական դաշտը.</p> <ul style="list-style-type: none"> - «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994) <p>«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի նպատակն է սահմանել ՀՀ հիմնական սկզբունքները ուղղված մթնոլորտային օդի մաքրության ապահովմանը և օդի որակի բարելավմանը, օդի որակի վրա քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ ազդեցությունների կանխմանը և մեղմացմանը և հանրային հարաբերությունների կարգավորմանը: Այս օրենքը կարգավորում է արտանետման լիցենզիաները և տրամադրում է մթնոլորտային օդի աղտոտման առավելագույն թույլատրելի քանակները/կոնցենտրացիան:</p> <p>Սույն օրենքի համաձայն, կապալառուն պետք է ձեռնարկի շինարարական աշխատանքներ, ինչպես նաև թափոնների տեղափոխում և ժամանակավոր պահում՝ փոշու և այլ արտանետումները նվազագույնին հասցնելով:</p> <ul style="list-style-type: none"> - «Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) <p>Օրենքը սահմանում է թափոնների հավաքագրման, փոխադրման, վերացման, վերամշակման, վերաօգտագործման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոնների բացասական ազդեցությունների կանխման համար օրենսդրական և տնտեսական հիմքը: Օրենքը սահմանում է թափոնների կառավարման գործողություններում պետական լիազորված մարմինների, ինչպես նաև թափոններ առաջացնող կազմակերպությունների դերերն ու պարտականությունները:</p> <p>Օրենքի համաձայն, շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած թափոնները պետք է ըստ անհրաժեշտության վերամշակվեն կամ վերացվեն հատկացված վայրերում:</p> <p>Ընտրված վայրերում շինարարական թափոնների և ավելցուկային նյութերի վերացումը պետք է գրավոր հաստատվի տեղական կառավարման մարմնի կողմից:</p> <ul style="list-style-type: none"> - «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ (2014) <p>Օրենքը սահմանում է գործունեության տեսակներ, որոնք ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսակետից գնահատման և փորձաքննության:</p> <p>Այս օրենքի համաձայն, առաջարկվող շինարարական աշխատանքները ենթակա են գնահատման և փորձաքննության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության տեսակետից:</p> <ul style="list-style-type: none"> - «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) <p>Համաձայն այս օրենքի, նախատեսված աշխատանքների իրականացման համար պահանջվում է շինարարության թույլտվություն:</p>
ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ	
Երբ / որտեղ են տեղի ունենալու հանրային խորհրդակցությունները	<p>ESMP նախագիծը կրապարակվի ԱԽՈԵ ֆեյսբուքյան էջի (https://www.facebook.com/TPQIProject) և EDF վեբկայքի (https://eif.am/) միջոցով՝ Համաշխարհային Բանկի կողմից հաստատումից հետո: ESMP նախագծի վերաբերյալ հանրային խորհրդակցությունները տեղի կունենան 2022թ. մարտին, և վերջնական տարվերերակը կներկայացվի հիմնական շահառուներին և հանրությանը:</p> <p>Նախատեսված աշխատանքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվությունը և հարցերի/ բողոքների հասցեագրման համար կոնտակտային տվյալները կտեղադրվեն աշխատավայրում՝ տեղեկատվական տախտակի վրա, և/կամ դրա անմիջական շրջակայքում:</p>

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. ԻՔ հողատարածքի տեղակայման քարտեզ
 Հավելված 2. Հողատարածքի սեփականության վկայական
 Հավելված 3. Շին. հրապարակի լուսանկարներ
 Հավելված 4. ESMP նախագծի վերաբերյալ հանրային խորհրդակցության հանդիպման արձանագրություն և հայտարարություն/հրավերը - կտրամադրվեն
 Հավելված 5: Հանրային խորհրդակցության մասնակիցների ցուցակը և լուսանկարները - կտրամադրվեն
 Attachment 6: Թափոնների հեռացման պայմանագիր - կտրամադրվի
 Attachment 7: Շին. Թույլտվություն - կտրամադրվի
 Attachment 8: Բնապահպանական ազդեցության պետական փորձաքննության եզրակացություն

ՄԱՍ Բ. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ /ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԿՐԻՆԻՆԳ**

Ներառելո՞ւ է գործունեությունը հետևյալից որևէ մեկը:	Գործողություն/խնդիր	Կարգավիճակ	Գործարկված գործողություններ
	Ա. Շենքի վերակառուցում	[] Այո [✓] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ա
	Բ. Նոր շինարարություն	[✓] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ա
	Գ. Կեղտաջրերի մաքրման անհատական համակարգ	[] Այո [✓] Ոչ	Եթե «Այո», տես ստորև Բաժին Բ
	Դ. Պատմական շենք(ներ) և թաղամասեր	[] Այո [✓] Ոչ	Եթե «Այո», տես ստորև Բաժին Գ
	Ե. Հողի ձեռքբերում ¹	[] Այո [✓] Ոչ	Եթե «Այո», տես ստորև Բաժին Դ
	Զ. Թունավոր և վտանգավոր նյութեր ²	[] Այո [✓] Ոչ	Եթե «Այո», տես ստորև Բաժին Ե
	Է. Ազդեցություն անտառների և/կամ պահպանվող տարածքների վրա	[] Այո [✓] Ոչ	Եթե «Այո», տես ստորև Բաժին Ա
	Ը. Բժշկական թափոնների բեռնաթափում/կառավարում	[] Այո [✓] Ոչ	Եթե «Այո», տես ստորև Բաժին Զ
	Թ. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	[✓] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես ստորև Բաժին Է

¹ Հողի ձեռքբերումը ներառում է մարդկանց տեղահանում, կենսամիջոցների փոփոխություն մասնավոր սեփականության նկատմամբ, որը գնվել/փոխանցվել է և ազդում է այն մարդկանց վրա, ովքեր ապրում են և/կամ գործարկում են բիզնես (կրպակներ) ձեռք բերվող հողում:

² Թունավոր/վտանգավոր նյութերը ներառում են /սակայն չեն սահմանափակվում/ ասբեստ, թունավոր ներկեր, վնասակար լուծիչներ, կապարի ներկերի լուծիչներ և այլն:

ՄԱՍ Գ. ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՊԱՐԱՄԵՏՐ	ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՑԱՆԿ
Օ. Ընդհանուր պայմաններ	Ծանուցում և աշխատողների անվտանգություն	<p>(a) տեղեկացնել տեղական շինարարական և բնապահպանական տեսչություններին և համայնքներին սպասվող աշխատանքների մասին</p> <p>(b) տեղեկացնել հանրությանը աշխատանքների մասին ՁԼՄ-ներում և (կամ) հանրությանը հասանելի վայրերում (ներառյալ շին. հրապարակը) համապատասխան ծանուցումների միջոցով</p> <p>(c) ձեռք բերել շինարարության և/կամ վերակառուցման համար օրենքով պահանջվող բոլոր թույլտվությունները</p> <p>(d) պաշտոնապես պայմանավորվել Գործատուի հետ, որ բոլոր աշխատանքները կիրականացվեն անվտանգ և կարգապահ ձևով՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(e) Ապահովել, որ աշխատողների ԱՊՄ-ը համապատասխանեն միջազգային լավագույն փորձին (սաղավարտներ, անհրաժեշտության դեպքում՝ դիմակներ և անվտանգության ակնոցներ, ամրագոտիներ և պաշտպանիչ կոշիկներ)</p> <p>(f) Համապատասխան ցուցանշումների տեղադրում շինհրապարակում՝ աշխատողներին հիմնական կանոնների և կանոնակարգերի մասին տեղեկացնելու համար:</p>
Ա. Ընդհանուր վերականգնողական և (կամ) շինարարական գործունեություն	Ողի որակ	<p>(a) Առաջին հարկից բարձր ներքին քանդման աշխատանքների ժամանակ օգտագործել ժամանակավոր աղբատարներ</p> <p>(b) Քանդման թափոնները պահել վերահսկվող տարածքում և ցողել ջրով՝ փոշին նվազեցնելու համար</p> <p>(c) Ճնշել փոշին օդաճնշական հորատման/պատերի քանդման ժամանակ՝ շարունակական ջրի ցողման և/կամ տեղում փոշու էկրանների տեղադրման միջոցով</p> <p>(d) շրջակայքը (մայթեր, ճանապարհներ) զերծ պահել աղբից՝ նվազագույնի հասցնելու փոշին</p> <p>(e) Թույլ չտալ շինությունների/թափոնների բաց այրումը տեղանքում</p> <p>(f) Թույլ չտալ շինարարական մեքենաների չափազանց պարապուրդը տեղանքում/շին.հրապարակում</p>
	Աղմուկ	<p>(a) Սահմանափակել շինարարական աղմուկը ցերեկային ժամերին, բացառությամբ ծայրահեղ անհրաժեշտության դեպքերի: Աշխատանքների ժամանակացույցի մասին տեղեկացնել տեղական</p>

		<p>համայնքներին, եթե այն շեղվում է ստանդարտ աշխատանքային ժամերից:</p> <p>(b) Ապահովել, որ շահագործման ընթացքում գեներատորների, օդային կոմպրեսորների և այլ մեխանիկական սարքավորումների շարժիչի կափարիչները փակ լինեն, և սարքավորումները տեղադրվեն բնակելի տարածքներից հնարավորինս հեռու:</p>
	Ջրի որակ	<p>(a) Սահմանել էրոզիայի և նստվածքների դեմ պայքարի համապատասխան միջոցներ, ինչպիսիք են, օրինակ. խոտի կապոցներ և/կամ տիղմային ցանկապատեր՝ կանխելու նստվածքի տեղաշարժը տեղանքից դուրս և մոտակա առվակներում և գետերում ավելորդ պղտորություն առաջացումը:</p>
	Թափոնների կառավարում	<p>(a) Բացահայտել թափոնների հավաքման և հեռացման ուղիները բոլոր հիմնական թափոնների տեսակների համար, որոնք ակնկալվում են քանդման և շինարարական աշխատանքներից.</p> <p>(b) Առանձնացնել շինարարության և քանդման հանքային թափոնները ընդհանուր աղբից, օրգանական, հեղուկ և քիմիական թափոններից՝ տեղում տեսակավորելով, և պահել համապատասխան տարաներում:</p> <p>(c) Հավաքել շինարարական աղբը և պատշաճ կերպով տեղաբաշխել նշանակված վայրերում</p> <p>(d) Հնարավորության դեպքում վերամշակել և վերաօգտագործել համապատասխան նյութերը (բացառությամբ ասբեստի):</p>
Բ. Կեղտաջրերի մաքրման անհատական համակարգ	Ջրի որակ	<p>(a) Ապահովել, որ սանիտարական թափոնների և կեղտաջրերի հետ աշխատելու մոտեցումը և մաքրման համակարգի նախագծումը հաստատված լինեն համապատասխան մարմինների կողմից:</p> <p>(b) Ապահովել, որ առանձին համակարգերից կեղտաջրերը մաքրվեն մինչև ընդունող ջրեր արտանետվելը՝ համապատասխանելու կեղտաջրերի որակի և դրանց մաքրման՝ ազգային ուղեցույցներով սահմանված որակի նվազագույն չափանիշներին:</p> <p>(c) Իրականացնել կեղտաջրերի մաքրման նոր համակարգերի մշտադիտարկում և զեկուցել Գործատուին դրա արդյունքների մասին.</p> <p>(d) Լվանալ շինարարական մեքենաները և սարքավորումները միայն հատկացված տարածքներում, որտեղ արտահոսքը չի աղտոտի բնական մակերևութային ջրերը:</p>
Գ. Պատմական շենք(-եր)	Մշակութային ժառանգություն	<p>(a) Եթե շենքը հանդիսանում է պատմական կառույց, նման կառույցին շատ մոտ է, կամ գտնվում է պատմական նշանակության տարածքում, չսկսել աշխատանքը մինչև համապատասխան ստանալը առ այն, որ նախագիծը հաստատված է Մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարության</p>

		<p>կողմից և որ բոլոր շինարարական աշխատանքները նախագծվում և իրականացվում են տեղական և ազգային օրենսդրությանը համապատասխան:</p> <p>(b) Ծանոթացնել անձնակազմին պատահական գտածոների հետ աշխատելու ընթացակարգերին: Կասեցնել ցանկացած ֆիզիկական ակտիվություն, եթե անձնակազմը կասկածում է կամ հայտնում է պատահական գտածոյի հայտնաբերման մասին, և անմիջապես գրավոր տեղեկացնել Գործատուին: Զվերսկսել աշխատանքը մինչև Գործատուի պաշտոնական ծանուցումը:</p>
Դ. Հողատարածքի ձեռքբերում	Հողի օտարման պլան/շրջանակ	<p>(a) Եթե հողի օտարում չէր ակնկալվում, բայց պահանջվում է, կամ եթե հողի օրինական կամ անօրինական օգտագործողների եկամուտների կորուստ չէր ակնկալվում, բայց կարող է տեղի ունենալ, անհապաղ խորհրդակցեք Համաշխարհային բանկի աշխատանքային խմբի ղեկավարի հետ:</p> <p>(b) Մուտք չգործել ենթածրագրի տարածք և չձեռնարկել որևէ ֆիզիկական գործունեություն այնտեղ մինչև վերաբնակեցման ավարտի և ազդակի անձանց փոխհատուցման ամբողջական տրամադրման մասին պաշտոնական ծանուցում ստանալը:</p>
Ե. Թունավոր նյութեր	Ասբեստի կառավարում	<p>(a) Եթե աշխատանքների վայրում ասբեստ է հայտնաբերվում, այն պետք է հստակորեն մակնշվի որպես վտանգավոր նյութ;</p> <p>(b) Հնարավորության դեպքում վտանգի նվազեցման նպատակով ասբեստը պետք է պատշաճ կերպով մեկուսացվի;</p> <p>(c) Նախքան հեռացումը (եթե դա անհրաժեշտ է) ասբեստը պետք է մշակվի խոնավացնող միջոցով՝ ասբեստի փոշին նվազեցնելու համար;</p> <p>(d) Ասբեստի հետ աշխատանքն ու դրա հեռացումը պետք է իրականացվի հմուտ ու փորձառու մասնագետների կողմից;</p> <p>(e) Եթե ասբեստային նյութերը ժամանակավորապես ենթակա են պահեստավորման, թափոնները պետք է տեղակայվեն անվտանգ փակ բեռնարկղերի մեջ ու դրանց վրա պետք է համապատասխան նշում կատարվի: Անվտանգության անհրաժեշտ միջոցներ պետք է ձեռնարկվեն տեղանքից դրանք չարտոնված կարգով հեռացնելը թույլ չտալու համար;</p> <p>(f) Հեռացված ասբեստը չի կարող վերաօգտագործվել:</p>
	Թունավոր / վտանգավոր թափոնների կառավարում	<p>(a) Տարածքում վտանգավոր և թունավոր նյութերի ժամանակավոր պահեստավորումը պետք է իրականացվի անվտանգ բեռնարկղերում մակնշված բաղադրության, հատկությունների և կառավարման վերաբերյալ տեղեկատվական մանրամասներով;</p> <p>(b) Վտանգավոր նյութերի համար նախատեսված տարաները պետք է տեղակայված լինեն ջրամեկուսիչ բեռնարկղերում՝ արտահոսքի և լուծազատման բացառման նպատակով:</p>

		<p>(c) Թափոնները պետք է տեղափոխվեն պաշտոնական աղբավայրեր, իսկ ավելցուկային նյութերը դատարկվեն տեղական իշխանությունների հետ համաձայնեցված վայրերում;</p> <p>(d) Չպետք է կիրառվեն թունավոր բաղադրիչներ կամ լուծույթներ պարունակող կամ կապարի հիմքով պատրաստված ներկեր:</p>
Զ. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	Հասարակական երթևեկության և հետիոտների համար շինարարության պատճառով ուղղակի կամ անուղղակի վտանգների ազդարարում	<p>(a) Համաձայն ազգային կանոնակարգի, կապալառու պետք է երաշխավորի, որ շինարարական տեղանքը պատշաճ կերպով անվտանգ է եւ երթևեկության հետ կապված շինարարությունը կարգավորված է: Սա ներառում, բայց չի սահմանափակում հետևյալը`</p> <ul style="list-style-type: none"> ▪ Ցուցադրումները, զգուշացնող նշանները, ուղեփակոցները եւ ճանապարհային շրջանցումները պետք է հստակ տեսանելի լինեն եւ հասարակությանը զգուշացված լինի բոլոր պոտենցիալ վտանգների մասին; ▪ Երթևեկության կառավարման համակարգ եւ աշխատակազմի վերապատրաստում, մասնավորապես այն տեղանքի հասանելիության եւ տեղանքին կից ծանր երթևեկության դեպքերում: Ապահով հետիոտնային ուղեճանապարհների և անցումների ապահովում այն վայրերում, որտեղ շինարարությունը խոչընդոտում է երթևեկությանը; ▪ Աշխատանքային ժամերի կարգավորում տեղական երթևեկության հոսքին համապատասխան, օրինակ խուսափել տրանսպորտային միջոցների հետ կապված հիմնական աշխատանքներից ծանրաբեռնված ժամերին կամ անասունների հոտերի; տեղաշարժի ժամանակահատվածներում ▪ Վերապատրաստված աշխատակիցների կողմից երթևեկության ակտիվ կառավարում տեղանքում, եթե անհրաժեշտ է ապահովել հասարակության անվտանգ ու պատշաճ երթևեկությունը; ▪ Եթե մոտակայքում գտնվում են դպրոցականներ երեխաները, ներառել երթևեկության անվտանգության աշխատակիցների` դպրոցական ժամերին երթևեկությունը կարգավորելու նպատակով; ▪ Աշխատանքների ընթացքում անվտանգ ու շարունակական մուտք դեպի գրասենյակային հաստատություններ, խանութներ ու բնատեղիներ, եթե կառույցները բաց են հասարակության համար:
Է. Սոցիալական ռիսկերի կառավարում	Հասարակական հարաբերությունների կառավարում	<p>(a) Ապահովել, որ դպրոցական/ուսումնական գործընթացի շարունակականության հետ կապված բոլոր պայմանավորվածությունները կատարվեն (օրինակ` ուսանողների համար ժամանակավոր կացարաններ, տրանսպորտ և այլն);</p> <p>(b) Կապալառուի թիմում նշանակել կոնտակտային անձ, որը պատասխանատու կլինի տեղական բնակչության հետ հաղորդակցվելու և հարցումներ/բողոքներ ընդունելու համար;</p>

		<p>(b) Խորհրդակցել տեղական համայնքների հետ՝ բացահայտելու և ակտիվորեն կառավարելու արտաքին աշխատուժի և տեղի բնակչության միջև հնարավոր կոնֆլիկտները</p> <p>(c) Բարձրացնել տեղական համայնքի իրազեկվածությունը փոխանցվող հիվանդությունների ռիսկերի մասին՝ կապված արտաքին աշխատուժի առկայության հետ և ներառել տեղական համայնքներին իրազեկման միջոցառումներում:</p> <p>(d) Բնակչությանը տեղեկացնել շինարարության/ աշխատանքային գրաֆիկների, ծառայությունների ընդհատումների, երթևեկության շրջանցման երթուղիների և ավտոբուսային ժամանակավոր երթուղիների, պայթեցման և քանդման մասին, ըստ անհրաժեշտության:</p> <p>(e) Սահմանափակել շինարարական աշխատանքները գիշերային ժամերին: Անհրաժեշտության դեպքում ապահովել, որ գիշերային աշխատանքը մանրակրկիտ պլանավորված է, և համայնքը պատշաճ կերպով տեղեկացված է, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել:</p> <p>(f) Ծառայության (ներառյալ ջրամատակարարում, էլեկտրամատակարարում, հեռախոսակապ, ավտոբուսային երթուղիներ), ցանկացած ընդհատումից առնվազն հինգ օր առաջ տեղեկացնել համայնքին շին. հրապարակում, ավտոբուսային կանգառներում և ներգրավված տներում/բիզնես կետերում ազդարարումների միջոցով:</p> <p>(g) Հասցեագրել Գործատուի կողմից ստեղծված Բողոքների լուծման մեխանիզմի միջոցով ստացված բողոքների՝ նշանակված ժամկետներում և Կապալառուի պատասխանատվության շրջանակներում:</p> <p>(h) Հնարավորության սահմաններում աշխատանքային ճամբարները չպետք է տեղակայված լինեն տեղական համայնքներին մոտ:</p> <p>(i) Աշխատանքային ճամբարների տեղակայումն ու շահագործումը պետք է իրականացվի հարևան համայնքների հետ խորհրդակցելով:</p>
	Աշխատանքի կառավարում	<p>(a) Հնարավորության սահմաններում հավաքագրել ոչ արհեստավարժ կամ կիսա-արհեստավարժ աշխատողների տեղական համայնքներից: Որտեղ և երբ հնարավոր է, պետք է տրամադրվեն վերապատրաստման դաընթացներ՝ տեղական բնակչության մասնակցությունը բարձրացնելու համար:</p> <p>(b) Աշխատանքի վայրում ապահովել համապատասխան սան. հանգույցներ (զուգարաններ և լվացման կետեր) տաք և սառը հոսող ջրի, օձառի և ձեռքի չորացման</p>

		<p>սարքերի համապատասխան պաշարներով: Ցանկացած բնակելի աշխատանքային ճամբարի համար պետք է տեղադրվի սեպտիկ տանկի ժամանակավոր համակարգ՝ առանց մոտակա ջրահոսքերի աղտոտման:</p> <p>(c) Բարձրացնել աշխատողների իրազեկվածությունը տեղական բնակչության հետ ընդհանուր հարաբերությունների կառավարման վերաբերյալ, սահմանել միջազգային պրակտիկային համահունչ վարքագծի կանոններ և խստորեն կիրառել դրանք՝ ներառյալ աշխատողներին աշխատանքից հեռացնելը և համապատասխան մասշտաբի ֆինանսական տույժերը:</p>
--	--	---

ՄԱՍ Դ. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Գործողություն	Ինչ (Ի՞նչ չափանիշ է մշտադիտարկվելու)	Գործողություն	Ինչ (Ի՞նչ չափանիշ է մշտադիտարկվելու)	Գործողություն	Ինչ (Ի՞նչ չափանիշ է մշտադիտարկվելու)	Գործողություն
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԻԼ						
Շինանյութի մատակարարում	Շինանյութի գնում գրանցված մատակարարներից	Մատակարարի գրասենյակ կամ պահեստ	Նյութերի և/կամ վկայականների պիտակների ստուգում	Մատակարարման պայմանագրերի ամփոփման ընթացքում	Շինանյութի հուսալիության և առողջության համար դրա անվտանգության ապահովում	ԾԿԳ Տեխ. վերահսկողություն իրականացնող ընկերություն
Շինանյութի և աղբի տեղափոխում Շին. սարքավորումների տեղաշարժ	- Մեքենաների և սարքերի տեխնիկական վիճակ; - Բեռնատարների պատում պաշտպանիչ շերտով/ներդիրի տեղադրում; - Սահմանված ժամերի և փոխադրման ուղիների պահպանում; - Շին. մեքենաների և սարքավորումների տեղաշարժ նախանշված երթուղիներով	- Շինհրապարակ - նյութերի և թափոնների տեղափոխման ճանապարհներ	Շին. օբյեկտի հարակից ճանապարհների ստուգում՝ երթուղու շարժման ուղղությամբ	Ընտրողական ստուգումներ աշխատանքային ժամերին	- կրճատել հողի և օդի աղտոտումը արտանետումների ց; - կրճատել տեղական համայնքների հանգստի խաթարումը/աղմուկ, վիբրացիա/; - նվազեցնել երթևեկի խափանումը	ԾԿԳ Տեխ. վերահսկողություն իրականացնող ընկերություն Ճանապարհային ոստիկանություն
Շին. սարքավորումների սպասարկում	- Մեքենաների և շին.սարքավորումների լվացում շինհրապարակից դուրս կամ բնական հոսքերից առավելագույն հեռավորության	Շինհրապարակ	Գործունեության ստուգում	Ընտրողական ստուգումներ աշխատանքային ժամերին	- խուսափել սարքավորումների շահագործման հետևանքով նավթամթերքներ	ԾԿԳ Տեխ. վերահսկողություն իրականացնող ընկերություն

	վրա; - Շին. սարքավորումների վերալիցքավորում կամ յուրում շինհրապարակից դուրս կամ սահմանված սահմանափակ տարածքում				վ ջրի և հողի աղտոտումից; - ժամանակին տեղայնացնել և նվազեցնել վնասը հրդեհի դեպքում	
Հեղուկ թափոնների առաջացում	- շինհրապարակում և շին. ճամբարում զուգարանների կազմակերպում և սպասարկում սանիտարական նորմերին համապատասխան; - անձրևաջրերի հավաքման և ջրահեռացման համակարգի կազմակերպում և կանոնավոր մաքրում; - կենցաղային և մեքենաների լվացման նպատակով օգտագործվող ջրի նստվածքային ավազանի /պարզարանի/ կազմակերպում	Շինհրապարակ և շինարարության հենակետ	Տեսողական զննում	Շինարարության ամբողջ ընթացք	- Կանխել շինհրապարակի հեղեղումը և աշխատանքների խափանումը ջրածածկման պատճառով; - նվազեցնել վերգետնյա և ստորերկրյա ջրերի աղտոտումը	ԾԿԳ Տեխ. վերահսկողություն իրականացնող ընկերություն
Աղմուկի և փոշու առաջացում	- աշխատանքային ժամերի պահպանում 09:00-18:00; - օդափոխություն; - աղմուկի մակմարդակ (բողոքների դեպքում):	Շինհրապարակ և մոտեցող ճանապարհներ	- Տեսողական զննում; - Աղմուկի և փոշու մակարդակների գործիքային չափում (բողոքների դեպքում)	- Ընթացիկ - Բողոքից հետո 2 շաբաթվա ընթացքում	Աշխատակազմի և հարևան համայնքների համար ռիսկերի նվազեցում	ԾԿԳ Տեխ. վերահսկողություն իրականացնող ընկերություն
Հողային աշխատանքեր	- աշխատանքների սկզբում հողի վերին շերտի հեռացում և ժամանակավոր պահում առանձնացված վայրում;	Շինհրապարակ	Գործողությունների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	- կրճատել հողի կույտավորման հետևանքով բուսականության	Հողային աշխատանքեր

	<ul style="list-style-type: none"> - փորված հողի ժամանակավոր պահպանում սահմանված և թույլատրված վայրերում՝ հողի կույտավորման պահանջներին համապատասխան: - անհրաժեշտության դեպքում փորված նյութի հետլիցք և ավելցուկային զանգվածի տեղափոխում գրավոր հաստատված վայր 				կորուստը; - կրճատել կեղտաջրերի թափանցումը վերգետնյա և ստորերկրյա ջրեր	
Կենցաղային թափոնների առաջացում	աղբամանների տեղադրում և թափոնների ժամանակին փոխադրում	Շինհրապարակ	Տեսողական զննում	Շինարարության ամբողջ ընթացքում	- Կանխել հողի, վերգետնյա և ստորերկրյա ջրերի աղտոտումը. - Պահպանել շինհրապարակի և դրա շրջակայքի գեղագիտական տեսքը	ԾԿԳ Տեխ. վերահսկողություն իրականացնող ընկերություն Երևանի քաղաքապետարան
Շինարարական թափոնների առաջացում	հատկացված տարածքներում շին. թափոնների ժամանակավոր պահում. - թափոնների ժամանակին հեռացում/տեխափոխում նշանակված վայրեր	Աշխատանքային տարածք Թափոնների հեռացման վայր	Գործողությունների ստուգում	Պարբերաբար շինարարության ընթացքում և դրա ավարտից հետո	- կանխել հողի, ստորգետնյա և ստորերկրյա ջրերի աղտոտումը. - խուսափել շինհրապարակում վթարներից՝ շինանյութի ջարթոնների և ցրված բեկորների պատճառով. - Պահպանել շինհրապարակի և	ԾԿԳ Տեխ. վերահսկողություն իրականացնող ընկերություն

					դրա շրջակայքի գեղագիտական տեսքը	
Բետոնի արտադրամասի շահագործում	<ul style="list-style-type: none"> - Բետոնի տրամադրում լիզենզավորված արտադրողից - շինհրապարում կամ հարակից տարածքներում Բետոնի արտադրության բացակայություն 	Շինհրապարակ և շինարարության հենակետ	<p>Փաստաթղթերի զննում</p> <p>Գործողությունների զննում</p>	Արտադրամասի շահագործման ամբողջ ընթացքում	<ul style="list-style-type: none"> - նվազեցնել բնակչության հանգստի խափառումը շինհրապարակի մերձակայքում; - նվազեցնել օդի և մակերևութային ջրերի աղտոտումը 	<p>ԾԿԳ</p> <p>Տեխ. վերահսկողություն իրականացնող ընկերություն</p> <p>Բնապահպանության և հանքային ռեսուրսների տեսչություն</p>
Աշխատողների առողջություն և անվտանգություն	<ul style="list-style-type: none"> - շինարարների ապահովում աշխատանքային հագուստով և ԱՊՄ- ով; - շին. սարքավորումների շահագործման և ԱՊՄ -ի օգտագործման կանոնների խիստ պահպանում. - շին. աշխատանքների ազգային կանոնակարգերին խիստ համապատասխանություն, - աշխատավայրում հրշեջ սարքավորումների և բժշկական օգնության հավաքածուների առկայություն. - աշխատանքի անվտանգության 	Շինհրապարակ	<p>Գործողությունների ստուգում</p> <p>OHS գրառումների ստուգում</p>	Շինարարության ամբողջ ընթացքում	Նվազեցնել շինարարների վնասվածքների և վթարների հավանականությունը	<p>ԾԿԳ</p> <p>Տեխ. վերահսկողություն իրականացնող ընկերություն</p>

	դասընթացների և հրահանգների ուցեցույցների առկայություն					
Երթևեկության և ճանապարհների անվտանգություն	<p>- ցուցանակների, նախազգուշական նշանների, արգելքների, երթևեկության ուղենիշերի տեղադրում.</p> <p>շինհրապարակը տեսանելի է և հանրությունը նախազգուշացված է բոլոր հնարավոր վտանգների մասին.</p> <p>- տեղում երթևեկի կառավարում պատրաստված և տեսանելի անձնակազմի կողմից՝ հանրության անվտանգ անցուղարձի համար,</p> <p>- հետիոտների համար անվտանգ երթևեկի ապահովում չին.</p> <p>աշխատանքների վայրում</p> <p>- աշխատանքային ժամերի հարմարեցում տեղական երթևեկության օրինաչափություններին՝ պիկ ժամերին տրանսպորտային գործունեությանը չխանգարելու համար</p> <p>- շին.աշխատանքների ընթացքում անվտանգ և շարունակական մուտք դեպի մոտակա գրասենյակային տարածքներ, խանութներ և</p>	Երթևեկության և ճանապարհների անվտանգություն	<p>- ցուցանակների, նախազգուշական նշանների, արգելքների, երթևեկության ուղենիշերի տեղադրում.</p> <p>շինհրապարակը տեսանելի է և հանրությունը նախազգուշացված է բոլոր հնարավոր վտանգների մասին.</p> <p>- տեղում երթևեկի կառավարում պատրաստված և տեսանելի անձնակազմի կողմից՝ հանրության անվտանգ անցուղարձի համար,</p> <p>- հետիոտների համար անվտանգ երթևեկի ապահովում չին.</p> <p>աշխատանքների վայրում</p>	Երթևեկության և ճանապարհների անվտանգություն	<p>- ցուցանակների, նախազգուշական նշանների, արգելքների, երթևեկության ուղենիշերի տեղադրում.</p> <p>շինհրապարակը տեսանելի է և հանրությունը նախազգուշացված է բոլոր հնարավոր վտանգների մասին.</p> <p>- տեղում երթևեկի կառավարում պատրաստված և տեսանելի անձնակազմի կողմից՝ հանրության անվտանգ անցուղարձի համար,</p> <p>- հետիոտների համար անվտանգ երթևեկի ապահովում չին.</p> <p>աշխատանքների</p>	Երթևեկության և ճանապարհների անվտանգություն

	բնակավայրեր		<ul style="list-style-type: none"> - աշխատանքային ժամերի հարմարեցում տեղական երթևեկության օրինաչափությունն երին՝ պիկ ժամերին տրանսպորտային գործունեությանը չխանգարելու համար - շին. աշխատանքների ընթացքում անվտանգ և շարունակական մուտք դեպի մոտակա գրասենյակային տարածքներ, խանութներ և բնակավայրեր 		<p>վայրում</p> <ul style="list-style-type: none"> - աշխատանքային ժամերի հարմարեցում տեղական երթևեկության օրինաչափությունն երին՝ պիկ ժամերին տրանսպորտային գործունեությանը չխանգարելու համար - շին.աշխատանքների ընթացքում անվտանգ և շարունակական մուտք դեպի մոտակա գրասենյակային տարածքներ, խանութներ և բնակավայրեր 	
Բնակելի շենքերի մերձակայքում աշխատանքների իրականացում	<p>աշխատանքային ժամերի պահպանում (09:00 – 18:00).</p> <ul style="list-style-type: none"> - աշխատավայրի սահմանազատում և ցանկապատում; - տեղադրված նախազգուշական նշաններ՝ հստակ տեսանելի 	Շինհրապարակ	Տեսողական զննում	Շինարարության ընթացքում ամսական այցելություններ	Հանրային անվտանգության ապահովում	ԾԿԳ Տեխ. վերահսկողություն իրականացնող ընկերություն

	<p>հանրությանը/ բնակիչներին բոլոր հնարավոր վտանգների մասին նախազգուշացնելու նպատակով.</p> <ul style="list-style-type: none"> - շինհրապարակ մուտքը սահմանափակված է միայն շինարարական աշխատանքների իրականացմանը մասնակցող լիազորված անձնակազմով, - մուտքը շինհրապարակ խստորեն վերահսկվում է. - փոշին շինհրապարակում ճնշվում է. 					
<p>Աշխատանքի վայրում COVID-19 պատրաստվածություն</p>	<ul style="list-style-type: none"> - Աշխատավայրում ձեռքերի լվացման միջոցների ապահովում՝ հոսող ջրի, ձեռքի օճառի, ձեռքի ալկոհոլային հիմքով մաքրող միջոցների և ձեռքի չորացման սարքերով բավարար պաշարներով; - աշխատավայր մուտքի կարգ և բժշկական ստուգումներ; - սենյակների, սարքավորումների, գործիքների և թափոնների կանոնավոր ախտահանում; - աշխատանքային կարգ՝ ուղղված աշխատողների միջև շփումը նվազեցնելու - մուտքի մոտ դիմակների և այլ համապատասխան ԱՊՄ-ների 	Շինհրապարակ	Գործողությունների ստուգում	Շինարարության ամբողջ ընթացքում	Նվազեցնել COVID-19 վարակի ռիսկը աշխատավայրերում	ԾԿԳ Տեխ. վերահսկողություն իրականացնող ընկերություն

	տրամադրում ծրագրի բոլոր աշխատակիցներին					
Շինհրապարակի վերականգնում և կանաչապատում	- շինհրապարակի մերձակա տարածքի մաքրում մնացորդային թափոններից և դրա վերականգնում; - մշտական մուտքի ճանապարհների վերջնական մաքրում և տարածքի դանդաֆտային ձևավորում/կանաչապատում:	Շին. հրապարակ և մոտեցող ճանապարհներ	Տեսողական զննում	Աշխատանքների եզրափակիչ փուլում	Նվազեցնել շին. գործունեության հետանքով լանդշաֆտի գեղագիտական արժեքի կորուստը	ԾԿԳ Տեխ. վերահսկողություն իրականացնող ընկերություն
Բողոքների լուծման մեխանիզմի գործողություն	Ծրագրի վերաբերյալ բողոքների կամ հարցերի հանրային իրավունք: Դիմել ՏԻՄ ղեկավարին (համայնքային իշխանություն). Իշխանության կողմից բողոքների դիտարկման համար համակարգողի նշանակում (բողոքների ընդունում, ուսումնասիրում և պարզաբանում, գրանցում գրանցամատյանում և տեղում լուծման առաջարկում): Դիմել ԾԿԳ-ին՝ թեժ գծի միջոցով (010515580), փոստով (ՀՀ, Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Վ. Սարգսյան 26/1), պաշտոնական վեբկայքի միջոցով (https://m.facebook.com/https://w	Շինարարության տարածք	Գործողությունների ստուգում	Շինարարության ամբողջ ընթացքում	- Վերահսկել համապատասխանությունը ծրագրի չափանիշներին, - Ժամանակին լուծել դաշտում առկա հարցերն ու բողոքները	ԾԿԳ Տեխ. վերահսկողություն իրականացնող ընկերություն

	<p>www.facebook.com/TPQIProject), էլ. փոստով s.darbinyan@tpqi.am) Դիմել Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադամ՝ հեռախոսով 011219727, էլ. փոստով՝ Marina.minasyan@eif.am կամ պաշտոնական վեբկայքի միջոցով http://eif.am/</p>					
ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՓՈԽԼ						
Կոմունալ համակարգերի սպասարկում	Էլեկտրահաղորդման գծերի, ջրահեռացման/կոյուղու խողովակաշարերի պահպանում աշխատանքային լավ վիճակում	ԻՔ շինարարական տարածք	Պարբերական ստուգումներ	ԻՔ գործունեության ամբողջ ընթացքում	Բացառել էլեկտրական ցնցումների, կարճ միացումների և խողովակների արտահոսքի ոչսկերը	ԾԿԳ
Կոշտ թափոնների կառավարում	Աղբամանների տեղադրում և թափոնների պարբերական տեղափոխման կազմակերպում	Այգու տարածք	Գործունեության հսկողություն	Կոշտ թափոնների կառավարում	Աղբամանների տեղադրում և թափոնների պարբերական տեղափոխման կազմակերպում	ԻՔ վարչություն Երևանի քաղաքապետարա ն
Ճանապարհի գործարկումն սպասարկում	<p>- Ճանապարհի մաքրում շարժվող մեքենաներից դուրս թափված աղբից. - Ճանապարհային պատահարների դեպքում բեռների ժամանակին պահում, ապակափակում և փոշու կամ հեղուկի արտահոսքի հեռացում.</p>	Ճանապարհի երթևեկելի հատված	Տեսողական զննում	<p>Ըստ պահանջի, ի պատասխան պատահարի</p> <p>Պարբերաբար, կորոշվի ՏԻՄ կողմից</p>	<p>- երաշխավորել երթևեկության անվտանգությունը և կանխել շրջակա միջավայրի աղտոտումը. - Ապահովել ճանապարհի զեղազիտական</p>	ԾԿԳ Երևանի քաղաքապետարա ն

	- ճանապարհների սպասարկման աշխատանքների հետևանքով թափոնների հավաքում և ժամանակին փոխադրում դեպի նշանակված աղբավայր				տեսքը	
Անձրևաջրերի հեռացման համակարգի սպասարկում	դրենաժային համակարգը գործունակ պահում	ԻՔ շինարարական տարածք	Տեսողական զննում	Պարբերաբար, կորոշվի ԾԿԳ կողմից	Ապահովել երթևեկության անվտանգությունը և նվազեցնել տարածքի վերականգնման հաճախականությունն ու ծախսերը	ԾԿԳ
ԻՔ և կանաչ տարածքների և աքսելերատորի շենքի տանիքի սպասարկում	<ul style="list-style-type: none"> - ծառերի կանոնավոր ջրում; - թափված տերևների ժամանակին հեռացում; - ջրի պահպանման, օգտագործման, ոռոգման խելացի մեթոդների կիրառում; - 10.անդշաֆտի կառավարման պլանի մշակում և կիրառում: 	ԻՔ կանաչ տարածքներ	Գործունեության հսկողություն	Գործունեության ամբողջ ընթացքում	Կանխարգելել կանաչ տարածքների գեղագիտական և ռեկրեացիոն արժեքի կորուստը	Կապալառուներ ԻՔ վարչություն

Շրջակա միջավայրի դաշտային մոնիտորինգի ամսական ստուգաթերթ

Շինհրապարակի տեղակայման վայր					
Կապալառու					
Ղեկավար Տեխսկիչ					
Շինհրապարակ այցելելու ամսաթիվ					
Շինարարական աշխատանքների կարգավիճակ					
Քննության ենթակա փաստաթղթեր և միջոցառումներ	Կարգավիճակ				Մեկնաբանություն
	Այո	Մասամբ	Ոչ	Կիրառելի չէ	
Առկա է Կապալառուի բնական ռեսուրսների արդյունահանման լիցենզիան					
Առկա է Կապալառուի թափոնների վերջնական հեռացման համաձայնագիրը					
Առկա է Կապալառուի շինհրապարակից կենցաղային աղբի հեռացման համաձայնագիր ծառայություն մատուցողի հետ					
Շինհրապարակը ցանկապատված է, նախագգուշացնող նշանները տեղադրված են					
Աշխատանքները չեն խոչընդոտում հետիոտների անցուղարձին և մեքենաների երթևեկությանը, ժամանակավորապես տրամադրվում են այլ մուտքեր					
Պահպանվում են աշխատանքային ժամերը					
Շինարարական տեխնիկական և սարքավորումները բնականոն տեխնիկական վիճակում են (մաշված չեն, չեն աղմկում, չունեն վառելիքի կամ յուղերի արտահոսք)					

Շինարարական նյութերը և թափոնները տեղափոխվում են ծածկված					
Շինհրապարակը ջրվում է՝ չափազանց փոշոտ շինարարական աշխատանքների դեպքում					
Կապալառուի ճամբարը կամ աշխատանքային բազան ցանկապատված են, նախանշված են ժամանակավոր պահուստներ՝ թափոնների կամ մեքենաների, սարքավորումների սպասարկման համար					
Կապալառուի ճամբարը ապահովված է խմելու ջրով և սանիտարական պայմաններով					
Կապալառուի ճամբարը կամ աշխատանքային բազան ունի առաջին օգնության բժշկական և հակահրդեհային պարագաներ					
Աշխատողները կրում են արտահագուստ և պաշտպանիչ պարագաներ, որոնք պատշաճ են տեխնոլոգիական գործընթացների համար /ձեռնոցներ, սաղավարտներ և շնչադիմակներ, ակնոց և այլն/					
Մեքենաների և մեքենասարքավորումների սպասարկումն ու վառելիքի լիցքավորումը իրականացվում է անջրանցիկ մակերևույթի վրա՝ նախատեսված գործառնական և արտակարգ իրավիճակների համար նախատեսված արտահոսքերի համար					
Մեքենաներն ու տեխնիկան լվացվում են կանխելով ուղղակի արտահոսքը դեպի ջրային օբյեկտներ					
Շինարարական թափոնը կուտակվում է բացառապես նախանշված վայրերում					

Ավելացած նյութերը և հողի փորման աշխատանքներից կուտակված հողը պահվում է առանձին և ըստ անհրաժեշտության օգտագործվում հետլիցքի/շինհրապարակի վերականգնման համար					
Ժամանակավորապես կասեցված աշխատանքներ՝ պայմանավորված պատահական գտածոներով, հաղորդված տվյալներ պետական գերատեսչություններին, որոնք պատասխանատու են մշակութային ժառանգության պահպանության համար					
Շինհրապարակում շինարարական աշխատանքների ավարտից հետո, շինհրապարակը և կապալառուի ճամբարը մաքրել աշխատանքների արդյունքում մնացած ցանկացած մնացորդներից և այդ տարածքը ներդաշնակեցնել շրջակա միջավայրին:					

Հավելված 1. ԻՔ հողամասի և աքսելերատորի շենքի տեղակայման քարտեզ և հատակագիծ





ՀՀ Կառավարության կողմից հաստատված
ՀՀ Կառավարության կողմից հաստատված
ՀՀ Կառավարության կողմից հաստատված

ՀՀ Կառավարության կողմից հաստատված

ՀՀ Կառավարության կողմից հաստատված
ՀՀ Կառավարության կողմից հաստատված
ՀՀ Կառավարության կողմից հաստատված

ՀՀ Կառավարության կողմից հաստատված

ՀՀ Կառավարության կողմից հաստատված



Հավելված 3. Շինհրապարակի լուսանկարներ



Աքսելերատորի շենքի կառուցման տարածք



Ինժեներական քաղաքի կառուցման ընդհանուր տարածքը

**Հավելված 4. ԲՄԿՊ նախագծի վերաբերյալ հանրային քննարկման
արձանագրություն**

Հավելված 5. Հանրային խորհրդակցության մասնակիցների ցուցակ և լուսանկարներ

Հավելված 9. Թափոնների հեռացման թույլտվություն՝ առկաիս

Հավելված 10. Շինարարության թույլտվություն – առկա

Հավելված 11. Շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության եզրակացություն

ՀԱՅԿ



ԴԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԱԿԱ ՄԻԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆԱՌԹՅԱՆ**

ԲՓ 0017-22

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Երգակ միջավայրի նախարար
Հ. Մինոյան

№Ը = 032022թ.

Ձեռնպահող՝ **«Հայնիսիաֆոծ» ԲԸԸ**
Ք. Լևոնյան, Նազեհյից Է

Գործունեությունը՝ երկան բաղայի Լոք Լոք վարչական շրջանի *Բազումանի փողոց 52/16 հասցեով* նախագահող «*Խմենկուրյան քաղաք-ի*
Խմենկուրյան քիզեմ շինք» կառուցած շրջակ միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

«Երգակ միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ կողմնաշենական կետերում» ԴՊՆԿ-ի տնօրենի պարտավարությունները կատարող



Դ. Մանուկյան

Անշտ նշանակությունը՝ 6 քնն

[illegible][illegible][illegible][illegible][illegible]

